

Շարունակական կրթության կենտրոնի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018/19 ուս. տարվա 1-ին կիսամյակում վերապատրաստման դասընթացներում՝ անգլերեն լեզու և ինֆորմատիկա մասնագիտությունների գծով ընդգրկված են 17 դասախոսներ, որոնցից.

Անգլերեն լեզվի դասընթացներում վերապատրաստվում են 6 դասախոսներ

Ինֆորմատիկա մասնագիտության գծով՝ 11 դասախոսներ

2017/18 ուս. տարվա 2-րդ կիսամյակում մանկավարժական և հոգեբանական պատրաստություն մասնագիտության գծով վերապատրաստվել են 13 դասախոսներ, որոնցից դասերին հաճախել և ստուգումների ժամանակ դրական են գնահատվել 8 դասախոսներ:

2017/18 ուս. տարվա 1-ին կիսամյակում վերապատրաստվել են 17 դասախոսներ՝ մանկավարժական և հոգեբանական պատրաստություն և անգլերեն լեզու մասնագիտությունների գծով:

Մանկավարժական և հոգեբանական պատրաստություն դասընթացում վերապատրաստման դասընթացներ անցել են 9 դասախոսներ, որոնք ստուգումների ժամանակ դրական են գնահատվել:

Անգլերեն լեզվի դասընթացներում վերապատրաստվել են 8 դասախոսներ, որոնցից 7-ը քննությունները դրական են հանձնել:

Կատարված աշխատանքների արդյունքում մենք առանձնացրեցինք մի շարք՝ հրատապ լուծում պահանջող խնդիրներ:

Դրանցից կարևորագույնը վերապատրաստման դասընթացների արդյունավետության բարձրացման խնդիրն է: Այն իր մեջ ընդգրկում է ինչպես ամբիոնների կողմից դասընթացների թեմաների հստակեցման, կոնկրետացման հարցը, այնպես էլ բուն դասավանդման արդյունավետության բարձրացման հարցերը, որոնք պետք է միտված լինեն ինչպես դասախոսների տեսական և գործնական գիտելիքների թարմացման, բարելավման, այնպես էլ դասավանդման գործընթացներում նրանց առաջ ծառայած մասնագիտական և մանկավարժական խնդիրների լուծման ժամանակակից մեթոդների հետ ծանոթացմանը և յուրացմանը:

Այսպես, նախքան դասընթացների սկսելը պետք է ունկնդիրները ձեռքի տակ ունենան ոչ միայն տվյալ դասընթացի թեմաների ցանկը, այլև թեմաների վերաբերյալ ամփոփ նյութերը, այդ թվում նաև քննական հարցաշարերը: Թեմաները հիմնականում պետք է վերաբերեն դասավանդման ժամանակակից մեթոդների, ինչպես նաև դասավանդման որակի բարձրացման նոր տեխնիկական միջոցների վերաբերյալ գիտելիքների ու հմտությունների ձեռք բերմանը:

Այս խնդրի լուծումով է հիմնականում պայմանավորված նաև դասերին ունկնդիրների հաճախման և կարգապահական մյուս հարցերի կարգավորումը:

Այս հարցերը քննարկվել են համապատասխան ամբիոնների վարիչների և վերապատրաստման դասընթացներում ընդգրկված դասախոսների հետ:

Դասընթացների արդյունավետության բարձրացման խնդիրների առավել հստակ պատկերացման համար պլանավորել ենք ունկնդիրների շրջանում անցկացնել սոցիոլոգիական հարցում, պարզելու համար նրանց վերաբերմունքը դասընթացների թեմաների նկատմամբ, բավարարված են թե ոչ, նրանց վերաբերմունքը դասավանդման արդյունավետության և մի շարք այլ հարցերի վերաբերյալ:

Օտար լեզուների ուսուցում:

Օտար լեզուների դասընթացների կազմակերպման ակտիվացման և հատկապես գովազդի նպատակով Կոնսորցիումը կազմակերպել է մի շարք միջոցառումներ, ինչպիսիք են՝ գովազդարշավի իրականացում <<ՄԻԳ> հեռուստատարնկերության և ՎՊՀ առցանց հարթակի միջոցով:

Սույն թվականի հոկտեմբերի 10-ից սկսվել են օտար լեզուների դասընթացները անգլերեն լեզվով: Կազմակերպվել է հինգ խումբ՝ լեզվական չորս մակարդակներով (A1.1- 22 ունկնդիր, A1.2- 10 ունկնդիր, A2- 3 ունկնդիր, B1.1-5 ունկնդիր), ընդհանուր՝ 40 ունկնդիրներով, որից 2-ը՝ քաղաքացիներ: Ընդհանուր դիմորդների թիվը՝ 92: